



st. saHAG and st. MESROB ARMENIAN CHURCH

The Reverend Patee Metjian, Pastor

Հոկտեմբեր 7, 1985

Թորգոմ Արքեպս. Մանուկեան, Առաջնորդ  
Ամերիկահայոց Թեմին  
Նիւ Եորք, Ն.Յ.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ժամանակին ստացայ ձեր նամակը, ներփակեալ խնդրոյ առարկայ  
մկրտութեան վկայագրի հետ:

Յիշողութիւնէս կը վրիպէր այդ մկրտութեան դրդապատճառները:  
Ուստի հեռաձայնով խօսեցայ ամուլին հետ:

Այո կնքահայրը ծնունդով հրեայ է, ամուսնացած քրիստոնեայ  
աղջկայ մը հետ: Ինծի ըսուեցաւ քրիստոնեայ եկեղեցի կը յաճախեն:  
Պատճառ մը եւս, ամուլը ոեւէ մտերիմ ազգական չունենալով, ստիպուած  
էին: Նաեւ իրենց խոր փափաքն էր մկրտել փոքրիկը մեր եկեղեցին մէջ:

Իմ տեսակցութեան ընթացքին կնքահայր-կնքամօր եւ փոքրիկին ծնողաց  
հետ, տեսայ Քրիստոնէական լուրջ կեցուածք: Հուզեցի փոքրիկը զրկել  
մեր եկեղեցւոյ ձէսէն գէտ այս պարագային:

Շատ պարկեշտ պիտի ըլլար եթէ Տէր Արշէն բարի գտնուէր իմանալով  
ինձմէ եղելութիւնը եւ ապա որոշումի մը հանգէր: Այդպէսլով շատ մը  
դժուարութիւններու առաջքը պիտի առնուէր եւ նուազ սրտնեղութիւն  
պիտի պատճառէր: Այնպէս կ'երեւի Տէր Արշէն չէ սորված մօտանալ կարգ  
մը հարցերու եղբայրական եւ Քրիստոնէական ոգիւով:

Յուսամ վերելի բացատրութիւնները զոհացուցիչ ըլլան:

Խոնարհաբար  
Տէր Բարի Քհնյ. Մէթեան

Կրկ. Արշէն Քհնյ. Այվազեանի

Քիւ 29099  
Սեպտեմբեր 28, 1985

Արժանաշնորհ  
Տ. Բարի Քհնյ. Մէքճեան  
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցոյ  
Ուինվուա.

Սիրելի Տէր Բարի,

Ձեզի խօսած էինք ֆերլոնի Սրբոց Ղեւոնդեանց Եկեղեցւոյ մէջ կատարուած  
մկրտութեան մը կնքահայրի ինքնութեան մասին:

Ձեր յիշողութիւնը թարմացնելու մատդրութեամբ կը ներփակենք մկրտութեան  
վկայագրի օրինակը:

Բարի եղէք առաջին առիթով անհրաժեշտ թացատրութիւնը ներկայացնել մեզի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՄԵՊԻՍԱԿՊՈՍ  
Առաջնորդ



**ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
Տէր Բարի Քհնյ. Մէթճեան, Հովիւ**

**ST. LEON ARMENIAN CHURCH  
Rev. Patee Metjian, Pastor**

Սեպտեմբեր 4, 1985

Գերաշնորհ Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի  
Արեւելեան Թեմին  
Նիւ Եօրք, Ն.Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մկրտութեան կնքահայրի հարցով Օգոստոս 21, 1985 թուակիր  
Ձեր նամակին ի պատասխան՝ ահաւասիկ մանրամասնութիւնները:

- Մկրտուողին անունը - Սառա Էնն Քէչիճեան
- Մկրտուողին ծնողքը - Կրէկըրի եւ Տայէն Քէչիճեան
- Մկրտութեան թուականը - Մայիս 20, 1984
- Կնքահօր անունը - Փօլ Ֆիտլըր

Ներփակ կը ղրկեմ նաեւ եկեղեցւոյ կողմէ տրուած վկայա-  
գրին լուսապատճէնը:

Սրբազան Հայր, կը փափաքիմ դարձեալ շեշտել թէ այս հար-  
ցը Ձեզի տեղեկացնելով իմ միակ դիտումս էր Ձեզ տեղեկ պահել  
ոչ-քրիստոնեայ կնքահայր մը ընդունելու կապակցութեամբ իմ  
բռնած դիրքիս, որ այս պարագային աւելի դժուար կացութեան մը  
մատնեց զիս նոյն ընտանիքին մէջ անցեալին պատահած նախընթա-  
ցի մը պատճառաւ: Իմ նպատակս չէ երբեք բողոք ներկայացնել  
անցեալին Տ. Բարի Քհնյ.ի բռնած դիրքին դէմ եւ կամ ուրիշ  
որեւէ կերպով դժգոհութիւն յայտնել այս խնդրով:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյդ, մնամ

Ձերդ ի Բրիստոս՝

Արմէն Քհնյ.

Արշէն Քհնյ. Այվազեան

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
630 Second Avenue, New York, N.Y. 10016

Եկեղեցւոյ Անունը St. Leon  
Name of Church

Համար Վկայագիր 559  
No. of this Certificate

Թուական May 20, 1924  
Date

Անուն Մկրտելոյն Sarah Ann Kechejian  
Name of Baptized

Տեղի Ծննդեան White Plains, N.Y.  
Place of Birth

Թուական Feb. 1, 1924  
Date

Տեղի Մկրտութեան St. Leon  
Place of Baptism

Թուական May 20, 1924  
Date

Անուն Մականուն Հօր Gregory Kechejian  
Father's Name

Անուն Մականուն Մօր Cliane Fernandes  
Mother's Name

Maiden Name

19 Beechwood Rd. Kottos-Kus, N. Y.  
Home Address

Street

City

State

Անուն եւ Մականուն Կնքաւոր Paul Fidler  
Godfather's Name

Address 101 Victoria Pl., Fort Lee, N.J.

Մկրտիչ Պաշտօնեայ Rev. Rene Holz  
Officiating Clergy

Ստորագրող Վկայագրի Rev. Rene Holz  
Certificate Issued By

Նուէր Եկեղեցւոյ \$ \_\_\_\_\_  
Offering for Church

ՆԱՍՏԱՆԱԿ  
ՈՍԵՍՅՈՒՄԵՆՈՎՆԻ ԸՄԿԱՅԵ

ԻՎԱՆՅԱՆ ԲԱՍՎՈՐ

• Ժողովրդականության մի ժողովն ընտրեց ղեկավարների շրջանը մեր ժողովում • Գ

• մեզ համար ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները -- Գ

• Մեր համար ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները : ԲԱՍՎՈՐ Գ Ժողովրդականության մի ղեկավարները ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները -- Գ

• մենք ղեկավարները ղեկավարելու մեզ համար ղեկավարները -- Գ

• Դրանք ենք մենք

- ղեկավարները ղեկավարելու մեզ համար ղեկավարները ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները -- Գ

• Դրանք ենք մենք ղեկավարները

• Դրանք ենք մենք

ԲԱՍՎՈՐ Գ Ժողովրդականության մի ղեկավարները ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները -- Գ

ՍԵՄԵՐ Գ Ժողովրդականության մի ղեկավարները ղեկավարություն է ղեկավարել մեր ղեկավարները -- Գ